
ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՄԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ»
ԾՐԱԳԻՐԸ *

ՀՐԱՆՈՒՇ ՍԱՀԱԿՅԱՆ

Բանալի բառեր՝ Յո. Լեփսիուս, «Գերմանահայկական ընկերություն», Մ. Քրիշյան, «Հայկական ակադեմիա», աստվածաբան, կրթություն, եկեղեցի, պատարագ, արխիվ, գրադարան, հայագիտություն, մշակույթ:

Նախաբան

1923 թ. հայ ժողովրդի մեծ բարեկամ Յոհաննես Լեփսիուսը (1858–1926) պատրաստվում էր Գերմանիայում ստեղծել ուսումնական և գիտաւճակությային մի կենտրոն կամ, այսպես կոչված, «Հայկական ակադեմիա», որն իր ավանդը կունենար հայագիտության զարգացման հարցում ու կնպաստեր գերմանահայկական հոգևոր-մշակությային, եկեղեցական-կրոնական կապերի շարունակմանը և զարգացմանը:

«Հայկական ակադեմիայի» ծրագիրը

Ըստ Յո. Լեփսիուսի ծրագրի՝ «Հայկական ակադեմիան» պետք է ծառայեր Հայ առաքելական և մյուս հին քրիստոնեական եկեղեցիներին պատկանող ուսանողների կրթության ու մահմեդականների շրջանում գործելու համար քարոզիչներ պատրաստելու նպատակներին¹: «Մենք պետք է «հոգևոր» աշխատանքի միջոցով նպաստենք հին քրիստոնեական եկեղեցիների ամրապնդմանն ու մահմեդականների շրջանում քարոզչական գործունեության վերականգնմանը»², – գրում էր Յո. Լեփսիուսը: Բայց քանի որ ուսանողների աջակցության ծրագիրը կապված էր դժվարությունների՝ նյութական արգելքների հաղթահարման հետ, Յո. Լեփսիուսը նախատեսում էր նախևառաջ զբաղվել «Հայկական ակադեմիայի»՝ որպես հայագիտական կենտրոնի ձևավորման հարցերով: Այդ տեսանկյունից նա իր առաջնահերթ խնդիրը համարում էր իրականացնել Ժնևի

* Ներկայացվել է 14. VIII. 2020 թ.: ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. դ. Ա. Հայրունին (08. IX. 2020 թ.): Ընդունվել է տպագրության 14. IX. 2020 թ.:

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Հայրունի. Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002:

² R. S c h ä f e r. Geschichte der Deutschen Orient–Mission. Potsdam, 1932, S. 258.

«Հայասերների միջազգային լիգայի» (“Ligue Internationale Philarmenie”)³ կանոնադրության այն կետը, որով նախատեսվում էր «ստեղծել արխիվ, որում պետք է մեկտեղվեին քաղաքական կամ կենսագրական տեղեկատվություն պարունակող բոլոր այն փաստաթղթերը, որոնք վերաբերում էին Հայկական հարցի պատմությանը, աքսորի կազմակերպմանն ու իրազդորմանը, Համաշխարհային պատերազմի ընթացքում իրականացված կոտորածների բնույթին ու չափին և դրանց հետևանքներին, որպեսզի այդ ամենից հայ ժողովրդի համար ապագայի դասեր քաղվեն»⁴: «Իմ ցանկությունն է, – մի առիթով գրում է Լեփսիուսն ակադեմիայի վերաբերյալ, – կապ ստեղծել հայկական ու գերմանական գիտությունների միջև այնպես, ինչպես աստվածաբանության բնագավառում նույնը հաջողությամբ իրականացնում էր Ռադեի, Ռոհրբախի ու Շթիրի «Անհրաժեշտ օգնություն»-ը (“Das Notwendige Liebeswerk”-ը)⁵ պատերազմից առաջ: ... Բայց առայժմ մենք ուզում ենք սահմանափակվել հայոց նորագույն պատմության վերաբերյալ փաստաթղթերի հավաքածուի ստեղծման, Բեռլինի կոնգրեսից ի վեր Հայկական հարցի վերաբերյալ գրականություն պարունակող գրադարանի

³ «Հայասերների միջազգային լիգան», որի նախագծի հեղինակը Յո. Լեփսիուսն էր, հիմնադրվել է 1920 թ. Ժնևում: Լիգայի նպատակը ցեղասպանությունը վերապրած հայ ժողովրդի կրած կորուստների արդարացի հատուցմանը նպաստելն էր (տե՛ս A. Meißner. Martin Rades “Christliche Welt” und Armenien. Bausteine für eine internationale Ethik des Protestantismus, Band 22. Berlin, 2010, S. 272):

⁴ A. Meißner. Die Armenische Akademie in Potsdam. – “Logos im Dialogos. Auf der Suche nach der Orthodoxie. Gedenkschrift für Hermann Goltz (1946–2010)” [A. Briskina–Müller, A. Drost–Abgarjan, A. Meißner (Hg.)]. Berlin, 2011, S. 236. – <https://books.google.am>.

⁵ 1897 թ. Պաուլ Ռոհրբախի, Մարտին Ռադեի ու Էվալդ Շթիրի գործնական ջանքերի շնորհիվ ստեղծված «Անհրաժեշտ օգնություն» ֆոնդը, որի հիման վրա հետագայում ձևավորվեց նույնանուն միությունը, նյութապես ապահովում էր Հայ եկեղեցուն պատկանող ուսանողների աստվածաբանական կրթությունը Գերմանիայում: 1898–1920 թթ. «Անհրաժեշտ օգնության» կրթաթոշակով Գերմանիայում կրթություն է ստացել 5 հայ ուսանող (այս մասին մանրամասն տե՛ս R. G. Hacı. Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche im Ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts. Göttingen, 1996, S. 42–52; նաև՝ A. Meißner. Martin Rades “Christliche Welt” und Armenien, S. 340–433): Մակայն խորհրդահայ պատմագրության մեջ շրջանառության է դրվել ու հետագայում բազմաթիվ հեղինակների կողմից ընդօրինակվել Պ. Ռոհրբախի մասին այն տեսակետը, թե նա խորհուրդ էր տալիս թուրքերին, որ պետք է հայերին տեղահանել Արևմտյան Հայաստանից և վերաբնակեցնել Միջագետքում՝ Բաղդադի երկաթուղու երկայնությամբ: Դա, սակայն, չի համապատասխանում պատմական իրականությանը, քանի որ այն ներկայացնող հեղինակներից ոչ մեկը չի նշում ապացուցող որևէ սկզբնաղբյուր (մանրամասն տե՛ս Ա. Հայրունի. Պաուլ Ռոհրբախը և Հայաստանը. – «Վեմ», 2011, թիվ 4, էջ 138–139):

հիմնադրման, հայագիտական նյութեր պարունակող տարեգրքերի հրատարակության աշխատանքներով...»⁶:

Քանի որ Յո. Լեփսիուսը լուսաբանել էր արևմտահայության դեմ տեղի ունեցած եղերական հանցագործությունների Համաշխարհային պատերազմի շրջանը⁷, խնդրո առարկա ժամանակաշրջանում նա մտադիր էր ամփոփել 1919–1923 թթ. իրադարձություններն ու այդպիսով ամբողջացնել վերջին 10 տարիների՝ 1914–1923 թթ., հայ ժողովրդի ողբերգական պատմությունը: Նա նախատեսում էր այդ ծրագրում ներգրավել 2–3 հայ, որոնց պարտականությունը լինելու էր առաջնակարգ բոլոր աղբյուրների տեսակավորումն ու գերմաներեն թարգմանությունը⁸:

Անցնելով գործնական քայլերի իրականացմանը՝ 1923 թ. վերջին Յո. Լեփսիուսն ուղերձ⁹ հղեց հայ ժողովրդի բոլոր բարեկամներին՝ խնդրելով «հայոց նորագույն պատմության վերաբերյալ» իրեն նյութեր փոխանցել, սկսեց փնտրել աջակիցներ ինչպես Գերմանիայում, այնպես էլ արտերկրում:

Ահավասիկ, հայ ժողովրդի օժտված զավակներից մեկին՝ դր. Մելքոն Քրիշյանին (1921 թ. նոյեմբերին նշանակվել էր Բեռլինում Խորհրդային Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության քարոզչության բաժնի վարիչ ու ապրում էր Պոտսդամում), ով Ռապալոյի պայմանագրի ստորագրումից ու 1923 թ. ամռանը

⁶ *St u A. Meißner. Die Armenische Akademie in Potsdam, S. 241.*

⁷ Deutschland und Armenien 1914–1918. Sammlung diplomatischer Aktenstücke (Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius). Potsdam, 1919.

⁸ *St u A. Meißner. Die Armenische Akademie in Potsdam, S. 236.*

⁹ «Քանի որ Անտանտի պահանջով զինադադարից հետո գերմանական զորքերը պետք է հեռանային Թուրքիայից, – նշված էր ուղերձում, – հայ ժողովրդի ճակատագրի վերաբերյալ տեղեկությունները, որ ես կարողացել եմ հավաքել վերջին 4 տարիների ընթացքում, բնականաբար, թերի են: ... Համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1914–1918 թթ., Թուրքիայի ներքին իրադարձությունների ու Եվրոպայի արևելյան քաղաքականության վերաբերյալ գերմանական տեղեկագրերն անփոխարինելի սկզբնաղբյուրներ էին: 1919–1923 թթ. համար արժանահավատ կարող են լինել միայն պատմական իրադարձությունների՝ հայ ու արտասահմանցի ականատեսների կողմից գրված տեղեկագրերն ու դրանց ամփոփումները: Այժմ ես դիմում եմ հայ ժողովրդի բոլոր բարեկամներին, ինչպես նաև՝ հայ գաղթականներին՝ խնդրելով անձնական տպավորությունների հիման վրա արված գրառումները կամ նշված շրջանի ուսումնասիրությունների արդյունքները հասանելի դարձնել ինձ՝ ուղարկելով բնագրերի պատճենները կամ դրանց հրատարակված լինելու դեպքում՝ տպագիր տեքստերը, որպեսզի ես կարողանամ արժանահավատ նյութի հիման վրա շարադրել այդ շրջանի պատմությունը (1919–1923 թթ.– Հ. Ս.) ... : Ես երախտապարտ կլինեմ, եթե հնարավորություն ունենամ տրամադրությանս տակ ունենալ Թուրքիայում հայ ժողովրդի արտաքսման ընդհանուր պատմության վերաբերյալ հնարավորինս ամբողջական նյութ» [տե՛ս J. Lepsius. Eine Bitte. – “Der Orient” (Potsdam), 1923, № 5, S. 41]:

Բեռլինում Խորհրդային Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության լուծարումից հետո դարձել էր գործազուրկ և ստիպված էր հանապազօրյա իր հացը վաստակել պատահական աշխատանքների միջոցով, Յո. Լեփսիուսը, ով «այլևս չէր կարող տեսնել, թե ինչպես են հայ մտավորականներն օտարանում իրենց ժողովրդից ու հոգևոր մշակույթից»¹⁰, առաջարկեց «ստանձնել իր կողմից ծրագրված ու գրեթե իրագործման շեմին գտնվող «Հայկական ակադեմիայի» ղեկավարությունը, իսկ մինչև ակադեմիան կսկսեր իր աշխատանքները, արդեն իսկ անդամագրվել դրա կառույցին՝ որպես գլխաշխատող»¹¹։ Իր հուշերում Մ. Քրիշչյանը գրում է. «Հայկական ակադեմիայի» ծրագիրը նոր չէր, ես այն գիտեի։ Դա նրա (Յո. Լեփսիուսի – Ն. Ս.) վաղեմի գաղափարն էր. երբ բժշկվեին հայի մարմնի վրա բացված վերքերը, երբ այլևս ստիպված չլինեի կերակրել սովածներին ու հանդերձավորել մերկերին, այդուհետև նա աջակցություն էր ցուցաբերելու հայերին մշակութային-հոգևոր-կրոնական ոլորտներում։ Այդ նրանց անհրաժեշտ է, որպեսզի նրանք, լինելով անապավեն, իրենց թշնամիների կողմից կուլ չզնան»¹²։

Թեև «Հայկական ակադեմիայի» ծրագիրը տպավորել էր Մ. Քրիշչյանին, բայց նա, հաշվի առնելով Յո. Լեփսիուսի առողջական վատթար վիճակը, կարծում էր, որ այն կյանքի կոչել այլևս հնարավոր չէ։ Այդուամենայնիվ, նա չառարկեց և ընդունեց առաջարկը, քանի որ «տարիներ շարունակ նվիրվածությամբ ու խնամքով մշակված ծրագրի ձախողումը կարող էր Լեփսիուսին հոգեկան խանգարման հասցնել»¹³։

Կայացած համաձայնությունից հետո՝ սկիզբ առան Մ. Քրիշչյանի բազմակի այցելությունները Յո. Լեփսիուսին։ Այդ հանդիպումների ընթացքում Լեփսիուսը, ըստ Մ. Քրիշչյանի, «երիտասարդական խանդավառությամբ» ներկայացնում էր «Հայկական ակադեմիայի» ծրագիրը, մանրամասնում էր, թե ինչպես պետք է ստեղծվի այդ «հոգևոր վերակենդանացման անցամաքելի աղբյուրը մի շնորհալի ժողովրդի համար, ինչպիսին հայն է, հոգևոր մշակույթի մի կենտրոնում, ինչպիսին Գերմանիան է»¹⁴։ Ըստ Մ. Քրիշչյանի՝ «Լեփսիուսը մտածում էր ոչ թե գերմանական կողմից հայկական մշակույթի միակողմանի (այսինքն՝ միայն աստվածաբանական տեսանկյունից) հովանավորության մասին, այլ նա մտադիր էր ողբերգական պատմություն ունեցող ու աշխարհով մեկ սփռված հին քրիստոնյա ժողովրդի՝ հայի անսասան մտավոր ու հոգևոր ներուժը նոր ծաղկման հասցնել»¹⁵։ Նրա կողմից ծրագրված «Հայկական ակադեմիան» «հայ ժողովրդի

¹⁰ M. Krischtschian. Erinnerungen eines Armeniers an Johannes Lepsius.–“Der Orient”, 1935, № 5, S. 104.

¹¹ Նույն տեղում, էջ 105։

¹² Նույն տեղում։

¹³ Նույն տեղում։

¹⁴ Նույն տեղում։

¹⁵ Նույն տեղում։

համար լինելու էր հոգևոր-մշակութային, եկեղեցական-կրոնական միջնաբերդ Եվրոպայում: Օժտված հայ երիտասարդները պետք է աջակցություն ստանային դրա կողմից՝ իրենց ազգային մշակույթը գերմանական-եվրոպական մշակութային բարձր արժեքներով պարարտացնելու համար»¹⁶:

Յո. Լեփսիուսը նախատեսում էր ծրագրի ֆինանսավորումն ապահովել գերմանահայկական համագործակցության միջոցով: Նա համոզված էր, որ կկարողանա այդ գործում ներգրավել արտասահմանում ապրող ունևոր հայերի: Ինչ վերաբերում է ծրագրին գերմանական կողմի ֆինանսական մասնակցությանը, ապա այն պետք է ապահովվեր «Դր. Լեփսիուսի արևելյան առաքելություն» կազմակերպության հասցեին կատարված նվիրաբերությունների հաշվին: Ըստ այդմ՝ նվիրատու բարեկամների թվաքանակի ընդլայնման ու, հետևաբար, նվիրաբերվող գումարների աճի համար նախատեսվում էր «ընդարձակել» նշված կազմակերպությունը, այսինքն՝ «այն պետք է հետզհետե ստանար հոգևոր-մշակութային կերպարանք ու դադարեր լինել որպես գուտ բարեգործական կազմակերպություն»¹⁷: Այդ «ընդարձակումը» պետք է իրականացվեր մի կողմից՝ «պարբերական-գրավոր» հրապարակումների, մյուս կողմից՝ «բանավոր» քարոզչության միջոցով: «Գրավոր» հրապարակումները կատարվելու էին «Der Orient» պարբերականում, իսկ «բանավոր» քարոզչությունը պետք է իրականացվեր մեծաթիվ բանախոսների շրջիկ դասախոսությունների միջոցով¹⁸: Ի դեպ, ընթերցվող դասախոսությունները բացառապես նվիրված էին լինելու Հայկական հարցին: Մ. Քրիշչյանը պետք է բանախոսներին հանգամանորեն ներկայացներ հարցի խնդիրների շրջանակը և նյութեր պատրաստեր դասախոսությունների համար: «Հայոց նորագույն պատմության արխիվն իմ մյուս խնդիրն էր՝ մինչև կստեղծվեին նյութական հնարավորություններ բուն ծրագրի իրականացման («Հայկական ակադեմիայի» որպես գիտամշակութային ու կրթական կենտրոնի ձևավորման– Հ. Ս.) համար»¹⁹,– իր հուշերում գրում է Մ. Քրիշչյանը:

Որպես «Հայկական ակադեմիայի» շենք նախատեսվում էր վարձակալել Պոտսդամում Յո. Լեփսիուսի տանը մերձակա Պֆինգստերգյան պալատը²⁰:

Յո. Լեփսիուսն ամբողջ ակյունով ձգտում էր հիշյալ ծրագիրն իրականացնել, բայց գնալով՝ նրա առողջական վիճակը վատթարանում էր: Չնայած դրան՝ հայանվեր

¹⁶ Նույն տեղում, էջ 105–106:

¹⁷ Նույն տեղում, էջ 106:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 107:

²⁰ Deutschland, Armenien und die Türkei 1895–1925. Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes–Lepsius–Archiv an der Martin–Luther–Universität Halle–Wittenberg, Teil 3 [G. Hermann und A. Meißner (Hg.)], Thematisches Lexikon zu Personen, Institutionen, Orten, Ereignissen. München, 2004, S. 32.

գործիչը չէր պատրաստվում հրաժարվել հայ ժողովրդի հետ կապված ծրագրերից ու հավատարմորեն շարունակում էր իր առաքելությունը։ Ուշագրավ է, որ 1925 թ. սկզբին «Der Orient»-ում նա խոսում էր «իր առաջիկա մեծ անելիքների մասին», հաղորդում էր 1924 թ. Գերմանիայի տնտեսական սուր ճգնաժամի (1919–1923 թթ.) հաղթահարումից հետո, 400 հայ որբերի Ղազիրի (Լիբանան) որբանոց տեղափոխելու և Մերձավոր Արևելքում հայոցնության աշխատանքներ իրականացնող՝ ամերիկյան «Near East Relief» (NER) կազմակերպության կառույցում նրանց խնամքը կազմակերպելու, Սիրիայում Կարեն Յեպեի՝ Մեծ եղեռնի ժամանակ թուրքերի կողմից առևանգված հայ կանանց ու երեխաների փրկագնման աշխատանքներին աջակցելու մասին²¹։

Նշված աշխատանքներին զուգահեռ՝ շարունակվում էին «Հայկական ակադեմիայի» ստեղծմանը նպաստակառնողված գործողությունները, քայլեր էին ձեռնարկվում նոր աջակիցներ ու նյութական հնարավորություններ ձեռք բերելու համար։ Այսպես, օրինակ, 1925 թ. աշնանը Յո. Լեփսիուսի դուստրը՝ Բրիգիտա Վալտեր-Լեփսիուսը, կատարելով հոր հանձնարարությունը, մեկնեց Բրյուսել ու Փարիզ և գրանցեց առաջին հաջողությունը. «Հայկական ակադեմիայի» ծրագրի իրականացման համար Պոդոս Նուբար փաշան 2000 մարկ հատկացրեց «Հայկական բարեգործական ընդհանուր միության» միջոցներից ու ևս 1000 մարկ՝ իր անձնական կարողությունից²²։

«Հայկական ակադեմիայի» հիմնադրումը

Երկու տարի տևած նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1925 թ. հոկտեմբերի 23-ին՝ ժամը 16.00-ին, դր. Ջեյմս Գրինֆիլդի բեռլինյան բնակարանում՝ Շվեբիշե 7 հասցեում, տեղի ունեցավ «Հայկական ակադեմիայի» հիմնադիր նիստը, որին ներկա էին Յո. Լեփսիուսի ու Ջ. Գրինֆիլդի հետ նաև՝ Նիկոլայ Վալտերը (Յո. Լեփսիուսի փեսան), Մ. Քրիշյանը, «Գերմանահայկական ընկերության» (այսուհետ՝ ԳՀԸ) անդամներ Վահան Զախարյանցը, Լիպարիտ Նազարյանցը։ Միաձայն քվեարկությամբ ակադեմիայի նախագահ ընտրվեց Յո. Լեփսիուսը, նրա տեղապահ՝ Ջ. Գրինֆիլդը, գանձապահ՝ Ն. Վալտերը, քարտուղար՝ Մ. Քրիշյանը։ Հաստատվեց 9 կետից բաղկացած «Հայկական ակադեմիայի» կանոնադրությունը։ 1-ին կետով «Հայկական ակադեմիան» հայ ժողովրդի գերմանացի բարեկամների ու Գերմանիայում բնակվող հայերի գիտական միավորում էր, որի խնդիրը հայկական մշակույթի և հայոց նոր ու նորագույն պատմության ուսումնասիրությունն էր։ 2–5-րդ կետերը վերաբերում էին ակադեմիային անդամակցության հարցերին։ 6-րդ կետով մասնագիտական գրադարանի հիմնադրումը, ամսական զեկույցները կամ տարեգրքի տեսքով գիտական հրապարակումներն ու փաստաթղթերի հրատարակությունը «Հայկական ակադեմիայի» գլխավոր պարտակա-

²¹ R. Schäfer. Նշվ. աշխ., էջ 117–118։

²² St u A. Meißner. Die Armenische Akademie in Potsdam, S. 241–242.

նություններն էին: 7-րդ կետը վերաբերում էր ակադեմիայի վարչությանը: Այն ունենալու էր երկու նախագահ՝ մեկը գերմանացի, մյուսը՝ հայ, մեկ գերմանացի գանձապահ ու մեկ հայ քարտուղար: 8-րդ կետով քարտուղարի գլխավոր խնդիրն ակադեմիայի գիտական առաջադրանքների իրականացմանն աջակցելն էր: 9-րդ կետը վերաբերում էր ֆոնդի ստեղծմանը՝ ակադեմիայի ծախսերը հոգալու համար:

Տարվա մեջ 4 անգամ՝ հունվարի, ապրիլի, հուլիսի ու հոկտեմբերի 23-ին, «Հայկական ակադեմիան» նիստ էր հրավիրելու: Առաջին նիստը կայանալու էր 1926 թ. հունվարի 23-ին, իսկ բացման արարողության համար նախատեսված հրապարակային նիստը՝ Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի օրվա նախօրեին՝ 1926 թ. ապրիլի 23-ին²³:

Այսպիսով, Յո. Լեփսիուսի մեծագույն բաղձանքներից մեկը կարծես թե իրականություն էր դառնում: Ցավոք, նշված ժամանակաշրջանում նրա առողջական վիճակը կտրուկ վատացել էր, և ստիպված էր բուժման նպատակով 1925 թ. հոկտեմբերի 28-ին մեկնել Իտալիայի Մերանո քաղաք: Այնտեղ, չկարողանալով հաղթահարել ծանր հիվանդությունը՝ շաքարախտը, 1926 թ. փետրվարի 3-ին մեծ հայասերը վախճանվեց²⁴, իսկ փետրվարի 5-ին հուղարկավորվեց տեղի ավետարանական եկեղեցու գերեզմանատանը²⁵:

Յո. Լեփսիուսի մահով «Հայկական ակադեմիայի» ծրագրի իրագործումը կիսատ մնաց: Հավելենք, որ նա 1926 թ. հունվարի 28-ին, զգալով իր մոտալուտ վախճանը, չեղարկել էր Պֆինգստերգյան պալատի վարձակալության պայմանագիրը²⁶:

ԳՀՀ-ի, «Դր. Լեփսիուսի արևելյան առաքելություն» կազմակերպության ու Բեռլինի հայ համայնքի միացյալ նախաձեռնությամբ՝ 1926 թ. ապրիլի 6-ին՝ առավոտյան ժամը 8-ին, Բեռլինի «Նոր եկեղեցուն» տեղի ունեցավ հանգուցյալի հիշատակին նվիրված պատարագ²⁷, որին ներկա էին պետական ու եկեղեցական բազմաթիվ անվանի գործիչներ: Հանդես եկան՝ Լեփսիուս ընտանիքի մեծ բարեկամ պրոֆ. Ալբերտ Վեկեսարը, Ավգուստ Վիլհելմ Շրայբերը («Գերմանիայի ավետարանական եկեղեցիների հանձնաժողով»), պրոֆ. Ադոլֆ Դայսմանը (Բեռլինի համալսարանի աստվածա-

²³ Նույն տեղում, էջ 242–243:

²⁴ St u R. Schäfer. Նշվ. աշխ., էջ 118–120:

²⁵ P.F.Rösler. Die Geschichte der Deutsch–Armenischen Gesellschaft. – “75 Jahre Deutsch–Armenische Gesellschaft. Festschrift” (hg. von der Deutsch–Armenischen Gesellschaft). Mainz, 1989, S. 86.

²⁶ H. Goltz. Zwischen Deutschland und Armenien. Zum 125. Geburtstag des evangelischen Theologen Dr. Johannes Lepsius (15. 12. 1858–03. 02. 1926). – “Theologische Literaturzeitung” (Jahrgang), 1983, № 12, S. 881.

²⁷ Gedächtnisfeier für D. Dr. Johannes Lepsius, 6. April 1926, Das Evangelische Zentralarchiv in Berlin; նաև՝ Lepsius-Archiv in Potsdam (այսուհետ՝ LAP), № 12371.

բանության ֆակուլտետ), Պատվ Ֆլայշմանը («Դր. Լեփսիուսի արևելյան առաքելություն»), Է. Շթիրը, Պ. Ռոհրբախն ու Ջ. Գրինֆիլդը (ԳՀԸ)²⁸:

«Հայկական ակադեմիայի» ծրագիրը կենսագործվեց 2011 թ., երբ հայ ժողովրդի՝ մի խումբ գերմանացի բարեկամների միջնորդությամբ Յո. Լեփսիուսի՝ Պոտսդամում գտնվող առանձնատունը («Լեփսիուսի տուն») գերմանական կառավարության միջոցներով նորոգվեց ու վերածվեց գիտամշակութային կենտրոնի, որն այսօր իր շուրջն է համախմբում ոչ միայն գերմանական, առհասարակ, միջազգային հայագիտական ամբողջ ներուժը, և զբաղվում է հայերիս համար ոչ միայն զուտ գիտական, այլև՝ արդիական հնչեղություն ու պատմաքաղաքական նշանակություն ունեցող հիմնախնդիրներով. հանգամանք, որը լիովին բնութագրական է հենց իր՝ Յո. Լեփսիուսի գործունեությանը²⁹:

Եզրակացություն

«Հայկական ակադեմիան», լինելով գիտաուսումնական և մշակութային կենտրոն Գերմանիայում, որի ստեղծմանը ձեռնամուխ եղավ հայանվեր գործիչ Յո. Լեփսիուսը կյանքի մայրամուտին, պետք է աջակցեր ցեղասպանություն վերապրած հայության հոգևոր «վերակենդանացմանը»:

Հրանուշ Սահակյան – 2018 թ. Գերմանիայում՝ Էռլանգեն-Նյուրնբերգի համալսարանում, զբաղվել է գիտահետազոտական աշխատանքով: Հեղինակ է 10 հոդվածի: hranush.sahakyan@mail.ru

REFERENCES

- Deutschland und Armenien 1914–1918. Sammlung diplomatischer Aktenstücke (Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius). Potsdam, 1919.
- Deutschland, Armenien und die Türkei 1895–1925. Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes-Lepsius-Archiv an der Martin-Luther-Universität Halle-Wittenberg, Teil 3 [G. Hermann und A. Meißner (Hg.)], Thematisches Lexikon zu Personen, Institutionen, Orten, Ereignissen. München, 2004.
- Gedächtnisfeier für D. Dr. Johannes Lepsius, 6. April 1926, Lepsius-Archiv in Potsdam, № 12371.
- Gedächtnisreden bei der Feier in der Neuen Kirche zu Berlin, am 6. April 1926, Lepsius-Archiv in Potsdam, № 17037.
- Goltz H. Zwischen Deutschland und Armenien. Zum 125. Geburtstag des evangelischen Theologen Dr. Johannes Lepsius (15. 12. 1858 – 03. 02. 1926). – “Theologische Literaturzeitung” (Jahrgang), 1983, № 12.

²⁸ Gedächtnisreden bei der Feier in der Neuen Kirche zu Berlin, am 6. April 1926, LAP, № 17037, S. 9–25.

²⁹ Ս. Հայրունի. Լեփսիուսի տունը՝ ցեղասպանագիտության և հայագիտության կարևոր կենտրոն. – «Հայագիտության հարցեր» (Երևան), 2014, թիվ 2, էջ 236–240:

- Hacik R. G. Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche im Ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts. Göttingen, 1996.
- Hayruni A. Lepsiusi tune – tseghaspanagitutyun ev hayagitutyun karevor kentron. – “Hayagitutyun hartser” (Yerevan), 2014, tiv 2 (In Armenian).
- Hayruni A. Yohannes Lepsiusi arakelutyune, Yerevan, 2002 (In Armenian).
- Hayruni A. Paul Rohrbakhe ev Hayastane. – “Vem”, 2011, tiv 4 (In Armenian).
- Krischtschian M. Erinnerungen eines Armeniers an Johannes Lepsius. – “Der Orient” (Potsdam), 1935, № 5.
- Lepsius J. Eine Bitte. – “Der Orient” (Potsdam), 1923, № 5.
- Meißner A. Die Armenische Akademie in Potsdam. – “Logos im Dialogos. Auf der Suche nach der Orthodoxie. Gedenkschrift für Hermann Goltz (1946–2010)” [A. Briskina-Müller, A. Drost-Abgarjan, A. Meißner (Hg.)]. Berlin, 2011. – <https://books.google.am>.
- Meißner A. Martin Rades “Christliche Welt” und Armenien. Bausteine für eine internationale Ethik des Protestantismus, Band 22. Berlin, 2010.
- Rösler P. F. Die Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft. – “75 Jahre Deutsch-Armenische Gesellschaft. Festschrift” (hg. von der Deutsch-Armenischen Gesellschaft). Mainz, 1989.
- Schäfer R. Geschichte der Deutschen Orient-Mission. Potsdam, 1932.

ПРОГРАММА «АРМЯНСКОЙ АКАДЕМИИ» ИОГАННЕСА ЛЕПСИУСА

ГРАНУՍՏ ՏԱԱԿՅԱՆ

Резюме

Ключевые слова: И. Лепсиус, «Немецко-армянское общество», М. Кришян, «Армянская академия», теолог, образование, церковь, литургия, архив, библиотека, арменоведение, культура.

Великий друг армянского народа доктор И. Лепсиус (1858–1926) в конце своей жизни планировал создать образовательный, научный и культурный центр или так называемую «Армянскую академию» в Германии, чтобы обучать учеников Армянской Апостольской и других христианских церквей и готовить проповедников для работы среди мусульман. Однако реализация программы поддержки студентов была связана с трудностями в преодолении материальных барьеров. Поэтому до того, как были решены финансовые проблемы, и программа поддержки студентов была поставлена на практическую основу, И. Лепсиус планировал работать над формированием «Армянской академии» как центра арменоведения. Работа в этом направлении началась в конце 1923 года. После двух лет подготовки, 23 октября 1925 года, в берлинской квартире доктора Джеймса Гринфилда состоялось учредительное собрание «Армянской академии». Президентом академии был избран И. Лепсиус, его заместителем – Дж. Гринфилд, казначеем – Николай Вальтер,

секретарем – Мелкон Кришмян. После смерти И. Лепсиуса (3 февраля 1926 г.) проект «Армянской академии» остался незавершенным и возобновился только в 2011 году, когда особняк И. Лепсиуса в Потсдаме был отремонтирован и преобразован в центр арменоведения при финансовой поддержке правительства Германии.

Грануш Саакян – аспирантка кафедры истории армянского народа факультета истории ЕГУ. В 2018 году занималась научно-исследовательской работой в Германии, в университете Эрлангена-Нюрнберга. Автор 10 статей. hranush.sahakyan@mail.ru.

THE PROGRAM OF THE “ARMENIAN ACADEMY” BY JOHANNES LEPSIUS

HRANUSH SAHAKYAN

S u m m a r y

Key words: J. Lepsius, “German-Armenian Society”, M. Krishchyan, “Armenian Academy”, theologian, education, church, liturgy, archive, library, Armenology, culture.

The great friend of the Armenian people, Dr. J. Lepsius (1858–1926), at the end of his life planned to create an educational, scientific and cultural center or the so-called “Armenian Academy” in Germany to train disciples of the Armenian Apostolic and other Christian churches and to prepare preachers for work among Muslims. However, the implementation of the student support program was associated with difficulties in overcoming material barriers. Therefore, before the financial problems were resolved and the student support program was put on a practical basis, J. Lepsius planned to work on the formation of the “Armenian Academy” as a center for Armenology. Activities in this direction began at the end of 1923. After two years of preparation, on October 23, 1925, the constituent assembly of the “Armenian Academy” was held in the Berlin apartment of Dr. James Greenfield. J. Lepsius was elected president of the academy, J. Greenfield as his deputy, Nikolai Walter as treasurer, Melkon Krishchyan as secretary. After the death of J. Lepsius (February 3, 1926), the project of the “Armenian Academy” remained incomplete and only resumed in the 21st century, when his Potsdam mansion was renovated and transformed into an important center of Armenian studies with the financial support of the German government.

Hranush Sahakyan – PhD student at the Chair of Armenian History of the YSU Faculty of History. In 2018 she was engaged in research work in Germany, at the University of Erlangen-Nürnberg. Author of 10 articles. hranush.sahakyan@mail.ru.